ԾԱՆՈՒՑՈՒՄ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԱՅՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՑ ՀԵՏՈ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ ԿԱՄ ԴԵՄ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ ԱՅԼԵՎՍ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

ՍՈՒՅՆՈՎ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԵՆՔ, որ Բըրբենք քաղաքում 2026թ. նոյեմբերի 3-ին, երեքշաբթի օրը, տեղի են ունենալու քաղաքային ընդհանուր ընտրություններ, որոնց ընթացքում ընտրողների քվեարկությանն են ներկայացվելու հետևյալ նախաձեռնությունները՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ___՝ Արդյո՞ք Բըրբանք քաղաքի կանոնադրությունը պետք է ենթարկվի փոփոխության՝ Քաղաքային խորհրդի անդամների ընդհանուր ընտրատարածքով ընտրվելու պահանջը վերացնելու և քաղաքի ընտրական համակարգը Քաղաքային խորհրդի որոշմամբ կամ ընտրողների նախաձեռնությամբ սահմանելու իրավասություն տալու նպատակով: Կողմնակիցներ՝ Ընդդիմախոսներ՝	Այո _____	Ոչ _____

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԸՍՏ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ ___՝ Արդյո՞ք պետք է Քաղաքային օրենսգրքի 2-րդ բաժնում 3-րդ գլուխ ավելացնելու մասին որոշում ընդունվի, որով Քաղաքային խորհրդի ընտրությունների համար քաղաքապետարանի ընտրական համակարգը ընդհանուրից պետք է փոխվի ըստ ընտրատարածքների ընտրությունների՝ «Քարտեզ 130»-ում արտացոլված ընտրատարածքներում: Կողմնակիցներ՝ Ընդդիմախոսներ՝	Այո _____	Ոչ _____

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է, որ Կալիֆորնիա նահանգի Ընտրական օրենսգրքի 9-րդ բաժնի 3-րդ գլխի 4-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքապետարանի օրենսդիր մարմինը կամ վերջինիս կողմից լիազորված նրա ցանկացած անդամ կամ անդամներ, կամ ցանկացած առանձին ընտրող կամ քաղաքացիների իրավասու միավորում, կամ ընտրողների և միավորումների ցանկացած համախումբ, կարող են քաղաքային նախաձեռնությանը կողմ կամ դեմ ներկայացնել գրավոր փաստարկ, որի ծավալը չպետք է գերազանցի 300 բառը՝ կցելով այն ներկայացնող անձի (անձանց) տպագիր անուն(ներ)ը և ստորագրություն(ներ)ը, իսկ կազմակերպության անունից ներկայացվելու դեպքում՝ կազմակերպության անվանումը, որը հանդիսանում է փաստարկի հեղինակը, և փաստարկի հեղինակ հանդիսացող առնվազն մեկ գլխավոր պաշտոնատար անձի տպագիր անունն ու ստորագրությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է, որ հաշվի առնելով ընտրությունների համար փաստարկների և քվեաթերթիկների նմուշների պատրաստման ու տպագրության համար ողջամտորեն անհրաժեշտ ժամանակահատվածը՝ Քաղաքապետարանի քարտուղարը սահմանել է 2026թ. օգոստոսի 14-ը՝ ուղբաթ օրը, աշխատանքային սահմանված ժամերի ընթացքում, որպես վերջնաժամկետ, որից հետո քաղաքային նախաձեռնության կողմ կամ դեմ որևէ փաստարկ չի կարող ներկայացվել Քարտուղարին՝ տպագրման և 4-րդ հոդվածով սահմանված կարգով ընտրողներին տրամադրելու համար: Փաստարկները պետք է ներկայացվեն Քաղաքապետարանի քարտուղարին՝ կցելով ներկայացնող հեղինակ(ներ)ի տպագիր անուն(ներ)ը և ստորագրություն(ներ)ը, իսկ

կազմակերպության անունից ներկայացվելու դեպքում՝ կազմակերպության անվանումը, ինչպես նաև փաստարկի հեղինակ հանդիսացող առնվազն մեկ գլխավոր պաշտոնատար անձի տպագիր անունն ու ստորագրությունը, հետևյալ հասցեով՝ Burbank City Hall), 275 E. Olive Avenue, Burbank, California: Փաստարկները կարող են փոփոխվել կամ չեղարկվել մինչև քաղաքապետարանի քարտուղարի սահմանած ամսաթիվը ներառյալ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է, որ Քաղաքային խորհուրդը սահմանել է, որ հակառակ կողմի ուղղակի փաստարկների հեղինակների կողմից ներկայացվող հակափաստարկները, որոնց ծավալը չպետք է գերազանցի 250 բառը, կարող են ներկայացվել Քաղաքապետարանի քարտուղարին՝ կցելով ներկայացնող հեղինակ(ներ)ի տպագիր անուն(ներ)ը և ստորագրություն(ներ)ը, իսկ կազմակերպության անունից ներկայացվելու դեպքում՝ կազմակերպության անվանումը, ինչպես նաև փաստարկի հեղինակ հանդիսացող առնվազն մեկ գլխավոր պաշտոնատար անձի տպագիր անունն ու ստորագրությունը, ուղղակի փաստարկների ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում՝ մինչև 2026թ. օգոստոսի 24-ը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՈՒՑՎՈՒՄ Է, որ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ներկայացված ցանկացած որոշում, անկողմնակալ վերլուծություն կամ ուղղակի փաստարկ բաց կլինի հանրային ուսումնասիրության համար Քաղաքապետարանի քարտուղարի աշխատակազմում՝ փաստարկների և վերլուծության ներկայացման վերջնաժամկետից սկսած առնվազն 10 օրացուցային օրվա ընթացքում:

Kimberley Clark
Ընտրական հարցերով պաշտոնատար անձ / Քաղաքապետարանի քարտուղար

Ամսաթիվ՝ 1 օգոստոսի, 2026թ.